

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՉԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ ՀԱՐՑԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրորբի երէկ խորհրդարանին մէջ ընկերային հարցերու նախարարութեան ընդհանուր տնօրէն Նասամ Բանանի հետ քննարկեց համապատասխան նախարարութեան աշխատանքներն ու դիմագրաւած հարցերը:

Պրորբի այցելեց նաեւ ճարտարարուեստի մարզի պատասխանատուներու միութեան մէջ պատուիրակութիւնը՝ նախագահութեամբ միութեան նախագահ Ֆատի Ապպուտի, որ յայտնեց, թէ Պրորբի ներկայացուցած են ճարտարարուեստի մարզի բարգաւաճման վերաբերող առաջարկներ եւ ծրագիր մը լիբանանեան արտագրութիւնները առանց տուրքերու արտածելու առնչութեամբ:

Ապպուտ ընդգծեց նաեւ, որ պետական տարեկան տոներու օրերուն թիւը 24 է եւ այդ 24 օրերը իրենց ժխտական անդրադարձը կ'ունենան արդիւնաբերութեան վրայ:

Ապպուտ անդրադարձաւ նաեւ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մնտուկին դիմագրաւած հարցերուն եւ առաջարկեց գտնել անոր մրցակից հաստատութիւններ եւ խնդրեց Պրորբիէն, որ յանձնարարութեամբ մը կազմուի նման առաջարկներ եւ ծրագիրներ ներկայացնելու համար:

Պրորբի ընդունեց երեսփոխան Ժան Օպէյար, ինչպէս նաեւ Դոմի Կուսակցութեան մէջ պատուիրակութիւնը՝ նախագահութեամբ Ժապրան Արաժիի եւ ընկերակցութեամբ աշխատանքի նախարար Ալի Քանսոյի եւ երեսփոխաններ՝ Ասատ Զարտանի, Մարուտի Ֆարէսի, Սեյիմ Սատէի եւ Մահմուտ Ապտէյ Նալէքի: Ներկայ էր Ամալ շարժումի փոխ նախագահ երեսփոխան Այուպ Հրաման եւ քաղաքական գրասենեակի անդամ Ալի Համտան:

Հանդիպումէն ետք Արաժի յայտնեց, որ քննարկումները կեդրոնացած են 2003ի պետական պիւտճէի նախագիծին եւ տուրքերու ու պաշտօններու առնչուած հարցերու շուրջ:

Ներկայից զրուտեցին ելեմուտքի եւ պիւտճէի երեսփոխանական յանձնարարութեան տուած որոշումները՝ աշխատանքներուն եւ պաշտօններուն իրաւունքներու պահպանման ի խնդրով, ըսաւ Արաժի:

Ան աւելցուց, որ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մնտուկին հարցը արժանացած է մեծ ուշադրութեան: Արաժի ըսաւ, որ Դոմի Կուսակցութիւնը կողմնակից է բոլորին՝ աշխուժ մասնակցութիւն բերելու ցոյցին, որովհետեւ ցոյցը կը հաստատէ ժողովուրդին շարժումը՝ արագորէն համար կառավարութեան տնտեսական քաղաքականութիւնը:

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

●ԱՐԴԱՐԱԴՏՈՒԹԵԱՆ նախարար Սամիր Ժարը երէկ ընդունեց Համաշխարհային Դրամատան պատուիրակութիւնը՝ նախագահութեամբ Տոմիսի Պըշարալի:

Պատուիրակութիւնը նախարար Ժարը տեղեկ պահեց գատական մարմիններու եւ կառույցներու բարեկարգման համար կատարուելիք օժանդակութեան յատկացման եւ առաջնահերթութիւններու ճշգրտման աշխատանքներէն:

●ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ նախարար Սլէյման Ֆրեմիէ երէկ երեսփոխաններ Ահմետ Ֆարֆաթի, Ասեմ Քանսոյի, Ռաժիհ Պարիզի, Աքեֆ Մամտալանիի եւ Քալսար Մուաուտիի հետ քննարկեց անոնց ներկայացուցած շրջաններու առողջապահական կարիքներու գոհացում տալու կարելիութիւնները:

●ՀԱՆՐՕԳՈՒՄ շինութեանց, փոխադրամիջոցներու, շուրի եւ ելեկոմունիկացիան հարցերու խորհրդարանական յանձնարարութեամբ վաղը պիտի գումարէ իր ժողովը, որուն ընթացքին պիտի քննարկէ ելեկոմունիկացիան ընկերութեան թղթաճրարը:

●ԱՉԳԱՅԻՆ Պըշար Կուսակցութեան ղեկավար Քարլոս Էտու իրանի ղեկավար Մասուտ Իտրիսիի հետ իր հանդիպումին քննարկեց քաղաքական վերջին իրադարձութիւնները:

●ՍՐԻ ԱՆԲԱՅԻ աշխատանքի նախարար Մահմուտ Սամարա Սինկի երէկ ժամանեց Լիբանան, պաշտօնատարներուն հետ խորհրդակցութիւններ ունենալու համար սրի շրջանի աշխատանքներու կապուած օրինական հարցերու շուրջ:

●ԸՆԿԵՐԱՅԻՆ հարցերու նախարար Ասատ Տիպ վաղը պիտի նախագահէ փողոցները բաժանող երեսփոխաններու հարցը հետապնդող յանձնարարութիւն ժողովին:

●ՆԱԽԱԳԱՀ գործիչ Լահուտ ալսոր կէսօրին Տըբուանէի մէջ բացուած պիտի կատարէ իր անունը կրող մարզադիմապան համալիրին, որուն եւ այլ համալիրներու շինութեան համար Արաբական Միացեալ Էմիրութիւններ 3,2 միլիոն տոլար նուիրած են:

●ՀԱՆՐՕԳՈՒՄ շինութեանց եւ փոխադրամիջոցներու հարցերու նախարար Նեպիհ Միքայիլ երէկ շեշտեց, որ փոխադրութեան մարզին բարգաւաճումը տնտեսական եւ ընկերային բարեկարգումին գուրագին, ինչպէս նաեւ արաբական երկիրներու հետ գործակցութիւնը, սահմանային դիմադրութիւնները պիտի չեզոքացնեն:

Մեծի ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՆԸ
2003 ՏԱՐԻՆ ԿԸ ԸՆԴԱԿԸ
«ԱՍՏՈՒԱՆՆՈՒՆԻ ՏԱՐԻ»

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՈՒՄԵՏԱԿԱՆ ՊԱՏՊԱՆ ԸՆԹԵՐՈՒՄ ԱՆՈՒՄԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՋ

Կիրակի, 19 Յունուար 2003ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ յընթացս Ս. պատարագի, պիտի ընթերցուի Մեծի Տանի Կիլիկիոյ գահակալ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսի հայրապետական պատգամը:
Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին՝ ներկայ գտնուելու Սուրբ եւ անմահ պատարագին եւ ունկնդրելու վեհափառ հայրապետին պատգամը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆԵՆ Ե ԱՊՐԻԼ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՄ

Կ'ԵՍԷ Ղ. ՂՈՄՆ

Աշխատանքային Ընդհանուր Համադաշնակցութեան մէջ պատուիրակութիւնը՝ նախագահութեամբ Համադաշնակցութեան նախագահ Դասամ Դուսի պատուիրակութիւնը պետական պիւտճէի նախագիծին դէմ բողոքի ցոյցին նախօրեակին երէկ շարունակեց իր այցելուութիւնները քաղաքական եւ հոգեւորականներու հետ խորհրդակցութիւններով:

Պատուիրակութիւնը այցելեց Պքերթի, ուր հանդիպում մը ունեցաւ Նասարալլա Պուրթու Սֆէյր պատրիարքին հետ:

Հանդիպումէն ետք Ղոսն յայտարարեց, որ այցելութեան նպատակն էր բողոքի ցոյցին դրոշմապատմանը ներկայացնել Սֆէյր պատրիարքին եւ հաստատել, որ Լիբանանի մէջ լիբանանցի ժողովուրդին իրաւունքն է ապրիլ արժանապատուութեամբ՝ վայելելով ուսման եւ բժշկական ապահովագրութեան արդար շարժում մըն է:

Պատուիրակութիւնը ապա այցելեց առողջապահութեան նախարար Սլէյման Ֆրեմիէի: Հանդիպումէն ետք Ղոսն ընդգծեց, որ Ֆրեմիէն ուղղակիորէն կապ ունի առողջապահական մարկին սպառնացող հարցերուն հետ, որոնցմէ հիմնականները կը նկատուին Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մնտուկին:

Ինչպէս որ Ղոսն նշեց, որ Ֆրեմիէն կ'օրակցութիւն յայտնած է ցոյցին:

Պատուիրակութիւնը այցելեց նաեւ Հրոյալլաի հոգեւոր պետ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալայի, որ հաւաստեց, թէ ինք անձամբ կը հետեւի համադաշնակցութեան աշխատանքներուն եւ դիտել տուաւ, որ համադաշնակցութեան պոռթկումը արդար է:

Ֆատալայ ընդգրծեց, որ համադաշնակցութեան գործունէութեան ուղին իրաւունքի պաշտպանութեան արդար շարժում մըն է:

Պատուիրակութիւնը այցելեց նաեւ յոյն ուղղափառ համայնքի Պէյրութի առաջնորդ Էլիաս Աւուտէ եպիսկոպոսին, որուն ներկայացուց բողոքի ցոյցին դրոշմապատմանը:

Ղոսն ընդգծեց, որ այսուհետեւ պիտի բանեցուցնէ յաւելեալ միջոցներով ապահովելու անհրաժեշտութեան հարցը, որ Ղոսն շեշտեց, որ

կատարուելիք պետք է փոփոխութեան ենթարկել տուրքերու եւ ընկերային հարցերու նկատմամբ իր քաղաքականութիւնը:

Միւս կողմէ, «Պէյրութի Որոշում» երեսփոխանական պլոքը երէկ երեկոյեան յայտնեց, որ իր մասնակցութիւնը պիտի չբերէ համադաշնակցութեան կազմակերպած բողոքի ցոյցին, որովհետեւ ներկայացուած պահանջներու գործարարութիւնն էտք անհետեւ կը տեսնէ ցոյցին կայացումը:

Նաեւ ուշ երեկոյեան ժողովրդավարական Հանդիպում երեսփոխանական պլոքը նաեւ լիբանանցի իր մասնակցութեան անդամ երեսփոխաններն են, որ պիտի մասնակցին ցոյցին:

●ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ սենտիքներու լիկան չեղեալ նկատեց այսօր կատարուելիք իր դասադուր յայտնեց, որ պիտի բաւարարուի բողոքի ցոյցին իր բերելիք մասնակցութեամբ:

Լիկային հրապարակած հաղորդագրութիւնը նշեց, որ Լիբանանեան Համադաշնակցութեան նախարարին բողոքի ցոյցին դրոշմապատմանը:

Ղոսն ընդգծեց, որ այսուհետեւ պիտի բանեցուցնէ յաւելեալ միջոցներով ապահովելու անհրաժեշտութեան հարցը, որ Ղոսն շեշտեց, որ

ՆԱԽԱՐԱՐ ԺԱՐԻ Կ ԱՐԴԱՐԱՅԻՆ ԿԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ՔԱՅԼԵՐԸ

Արդարադատութեան նախարար Սամիր Ժարը երէկ նախագահեց ժողովի մը, որուն ներկայ էին նախարարութեան ընդհանուր տնօրէն զատախազ Օմար Նաթուր, իշխանութեանց գերագոյն խորհուրդի նախագահ զատախազ Թանիս Սուրի, ընդհանուր զատախազ Աման Ատտուա, Պէյրութի փաստաբաններու սենտիքային նախագահ Ռեմոն Շարիտ, Թրիփոլի փաստաբաններու

սենտիքային նախագահ իշխանութեանց գերագոյն խորհուրդի նախագահ զատախազ Թանիս Սուրի, ընդհանուր զատախազ Աման Ատտուա, Պէյրութի փաստաբաններու սենտիքային նախագահ Ռեմոն Շարիտ, Թրիփոլի փաստաբաններու

ապահով երկիր մըն է, սակայն ապահովական խախտումները միշտ պ կարելի են. հետեւաբար որոշուեցան ապահովական ծրագիր մը որդեգրել:

Ժարը հաստատեց, որ նշեալ ապահովական ծրագիրները պիտի գործադրուին արդարութեան բոլոր պայմաններուն մէջ:

Միւս կողմէ, Ժարը երէկ այցելեց Պաթրոն, ուր շեշտեց, որ նախագահ գործիչ միջոցով եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջոցով հասկացողութիւնը չի նշանակել անպայման հարցերու շուրջ նոյն կեցուածքները ունենալ կամ կարծիքները բաժնել:

Ժարը նկատեց, որ կառավարութեան փոփոխութեան մեքանիզմը տակաւին յստակ է: Ան աւելցուց, որ զարմանալի կամ անարժանապատեան չի զգար:

ՔԱՆՏԱՌՈՒԹԵԱՆ
Տր եւ տիկին Երագրան եւ Սալիհ Չէյլեան բախտաւորուած են առջինն մանչ գաւակով մը
ՍԱՐԳԻՍ
23 Դեկտեմբեր 2002, Լոս Անճելըս

ԳՐԱՌՈՒԹՅՈՒՆ
Ը.Ս.Ը.Ս. ԱՆՈՒՄԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻԴ
1 ՄԱՐՏ 2003

ՇՆՈՐԸԱԿԱԼԻԷ
●Տր եւ տիկին Ասատուր Իզմիրլեան, օրը. Ովսանց Իզմիրլեան, տր եւ տիկին տոքթ. Կարուստ եւ Զարուկ Չալեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակցեցան իրենց քրոջ՝ ԹԱԿՈՒՇԻ ԳՐԳԵԱՃԱՐԱՆԻ մահուան սուգին:

BARON TRAVEL & TOURISM AGENCY
(SALES AGENT FOR ARMENIAN AIRLINES)
ՓԵՏՐՈՒՄ ԱՍՄՈՒՆ ՇՐՋԱՊԱՏՆԵՐ
●9-13 Փետրուար SHARM EL SHEIKH 225 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 5 աստղանի պանդոկ)
●13-17 Փետրուար SHOPPING IN PRAGUE 490 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 4 աստղանի պանդոկ)
●DUBAI (2 գիշեր + 3 ցերեկ) 290 \$ՏՆ ԱՍԵՆԱԼ
ԿՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ
Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ BARON TRAVEL, Պուրճ Համուտ, Մարաշ քաղ, Իտ. 01-263624, 01-241344 եւ 03-275657 քիւնրու:

ՊԻՏՏԵՒԻ ՆԱԽԱԳԻԾԵՆ ՉՆՋՈՒԵՅԱՆ ԹԻԻ 40 ԵՒ 42 ՅՈՂՈՒԱԾՆԵՐԸ

Ելեմուտքի եւ պետական պիւտճէի նախագիծի երեսփոխանական յանձնարարութեամբ երէկ շարունակեց իր քննարկումները: Անիկա ընջեց թիւ 40 եւ 42 յօդուածները, որոնց հիմամբ ուսուցիչներու դասաւանդութեան եւ աշխատանքի ժամերը յաւելում պիտի արձանագրէին եւ բժշկական ու կրթնական ստի համաձայնագրու ու միացեալ նպատակով ստանալին պետական մարզի պաշտօնները:

Յանձնարարութեամբ վաւերացուց թիւ 41 յօդուածը, որ կը պարտադրէ քաղաքապետարաններուն վճարելի տուրքերու ամորթացումը:

Յանձնարարութեան ժողովին նախագահեց երեսփոխան Սամիր Ազար: Ներկայ էին ելեմուտքի նախարար Ֆուատ Սինիորա, պետական պիւտճէի նախագիծի տնօրէն Էլիաս Շարպէլ եւ շարք մը երեսփոխաններ:

Ժողովէն ետք երեսփոխան Ազար Շահաճյալ յայտարարեց, որ նշեալ փոփոխութիւններն ու ուսուցիչներուն ու աշխատանքներուն իրաւունքներուն սպառնացող կարգ մը յօդուածները պիտի չընջուէին, եթէ սենտիքային գորաւոր կեցուածքներն ու Աշխատանքային Ընդհանուր Համադաշնակցութեան մերժումը չզրուեցորէին:

ՀԱՐԻՐԻ ԼՈՍՏՈՆԻ ԲԱՐԵԿԱՄՆ Ե Կ'ԵՍԷ ԼՈՐՏ ԱՐԹՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քրոյալլէի մէջ ընդունեց Լոստոնի քաղաքապետ Լորտ Ալտերման Քեկըն Արթըրը՝ ընկերակցութեամբ Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Քինչընի:

Հանդիպումին քննարկուեցան երկրին մէջ արձանագրուած զարգացումները, ինչպէս նաեւ Բրիտանիա - Լիբանան երկկողմանի յարաբերութիւնները:

Հանդիպումէն ետք Լորտ Արթըր յայտնեց, որ վարչապետ Հարիրիի հետ ունեցած է մտերմիկ հանդիպում մը՝ նկատել տալով, որ Հարիրի Լոստոնի բարեկամն է:

Արթըր ըսաւ, որ քննարկումի առարկայ դարձած են Լիբանանի եւ շրջանի կացութիւնը:

Վարչապետ Հարիրի վարչապետարանին մէջ նախագահեց նաեւ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մնտուկի հարցերուն առնչուած ժողովի մը, որուն ներկայ էին աշխատանքի նախարար Ալի Քանսո, ընդհանուր տնօրէն Մահմուտ Ֆարաքի, սնտուկի վարչական տնօրէն Մորիս Ապու Նատէր, վարչութեան անդամները եւ վարչապետ Հարիրիի խորհրդական Ղազի Նուսէթ:

Ժողովէն ետք Քանսո ըսաւ, որ հանդիպումին քննարկուած են Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մնտուկին հարցերը:

Ժողովին քննարկուեցան նաեւ սպահովագրութեան նպատակով հաւաքուած գումարները պետական գանձարկին մէջ շահարկելու կարելիութիւնները:

ՆԱԽԱԳԱՀ ՉՈՐ. ԼԱՀՈՒՏ ...



Շարունակուած Ա. ԷԶԵՆ
տի մաքրութեան նպատակով:
Նախագահ Լահուտ ընդունեց հաղորդակցութեան միջոցներու նախարար Փան Լուի Քըրտահիին, որ նախագահին ներկայացուց նախարարութեան նկատուողութիւնները՝ բջիջային հետաձայնի մարկին ապահովականացման գործընթացին նկատմամբ:
Նախագահ Լահուտի այցելեց նաեւ պետական նախարար Նեպիհ Պալտուն: Քննարկուեցան քաղաքական վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ շրջանային հարցեր, յատկապէս Սուրիոյ եւ Լիբանանի դէմ ուղղուած իրադարձութեան սպառնալիքներն ու անոնց դէմ ընդունուող միջոցները:
Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ երեսփոխան Ապտէյ Լաթիֆ Չէյլը, բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն Գոր. Ռեմոն Ապար, Լիբանանի թաղապետերու լիկայի եւ Պրումմանա Հայ Սրբալի շրջանաւարտներու պատուիրակութիւնը:

«ԱՉԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

●Կարուստ Սերայտարեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի, Տր եւ տիկին Մայր եւ Նատիա Ղարիպեան 50,000 Լ. Ն. Տիկին Ֆրանսուիկ Սարգիսեան 30,000 Լ. Ն. Տիկին Անարկ Անտոնեան 20,000 Լ. Ն. Տր եւ տիկին Րաֆֆի եւ Մայրա Քէշիեան 20,000 Լ. Ն.

VISION CARE CENTER
Knajian Optical
Our answers to your questions on customised progressive lenses.
● Comprehensive eye care
● Specialized progressive lens services
● Doctor supervised contact lens fitting
Address: Autroute Jdeideh, behind Almaza Beer factory facing McDonald's Restaurant, Yara Center, First Floor. Tel: 01-877740. Fax: 01-375242. E-mail: knajian@hotmail.com

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Բ Ն



Հ. Մ. Ը. Մ. - ԼԵՎԱՍ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԵՒ ՃԵՄԱՐԱՆ ՀԱՍԱՆ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

Անցեալ շաբաթավերջին տեղի ունեցան Հ. Մ. Ը. Մ. ի ԼԵՎԱՍ ի յանձնախումբին կողմէ կազմակերպուած ֆուտբոլի մրցաշարքին կիսաւարտական հանգրուանի մրցումները:

Մեսրոպեան 7-1 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Եղիշ Մանուկեանը հասաւ աւարտականին: Իր կարգին, ձեմարանի խումբը ապահովեց աւարտական հանգրուանին իր տոմսը, 6-1 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Դպրեվանքի խումբը:

Աւարտականի եւ երրորդ դիրքի մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Շաբաթ, 18 Յունուարին: Յրդ դիրքի մրցումին համար, ժամը 2:30ին Եղիշ Մանուկեան կը մրցի Դպրեվանքի դէմ, իսկ աւարտական մրցումին, որ տեղի պիտի ունենայ ժամը 3:30ին, Մեսրոպեան՝ ձեմարանի դէմ:

ԼԵՎԱՍ ի յաջորդ մրցումները պիտի ըլլան փինկ փոնկի խաղերը, որոնք տեղի պիտի ունենան «Sebouh and Joc» շէնքը, (Չալքա), Ա. յարկ: Շաբաթ, 25 Յունուարին՝ տեղի պիտի ունենան տղոց մրցումները, իսկ կիրակի, 26 Յունուարին՝ աղջկանց մրցումները:

ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՇԱՆԿԻԼ ՇԱՀԵՑԱԻ ՏՈՒՊԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ



Շանկիլի մարզիկները՝ իրենց շահած բաժակով

Երէկ կէսօրէ ետք, Լիրանան վերադարձաւ Շանկիլի պասքեթպոլի խումբը, որ Տուպայի մէջ իր մասնակցութիւնը բերաւ պասքեթպոլի միջազգային մրցաշարքին: Աւարտական մրցումին, որ եղաւ զուտ լիրանանեան, Շանկիլի պարտութեան մատնել է ետք Ռիատին 105-87, տիրացաւ տիտղոսին: Նշենք, թէ երրորդ դիրքի մրցումին, լիրանանեան ալ խումբ մը Սաժէս 92-77 արդիւնքով պարտութիւն մը կրեց ու՛րանական Պի. Սի. Քիւն խումբէն:

Լիրանան իր վերադարձով, Շանկիլի մնացեալ խումբերուն նման պիտի շարունակէ Լիրանանի պասքեթպոլի ախոյեանութեան մրցումներուն իր մասնակցութիւնը բերել:

Շաբաթավերջին տեղի կ'ունենան 9րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ:

● ՈՒՐԱԿԱԹ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Սատար - Սաքրալ	21:30	Սատար
● ՇԱԲԱԹ. 18 ՅՈՒՆԻՍԿԱՆ		
Ղազիր - Անիպալ	17:00ից	Ղազիր
Անդրանիկ - Պու Սթարգ	18:00ից	Անդրանիկ
● ԿԻՐԱԿԻ. 19 ՅՈՒՆԻՍԿԱՆ		
Շանկիլի - Քահրապա	17:00ից	Շանկիլի
Ռիատի - Սաժէս	18:00ից	Ռիատի

ԹԵՆԻՍ. ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԲԱՅ ՄՐՑԱՇԱՐՔ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԱՆՑԱԻ Բ. ՇԱՆԳՐՈՒԱՆ, ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ԴՈՒՐՍ ՄԱՑ



Դաիթ Նալպանտեան

Աւստրալիոյ թենիսի կրան շիֆի բաց մրցաշարքին Ա. հանգրուանի երէկեան մրցումներուն, երէկ 10րդ դասուած արժանութիւնաւ Դաիթ Նալպանտեան անցաւ Բ. հանգրուան, հակառակաւոր Բ. ֆրանսացի ժերմուտի մարի հետ իր կատարած մրցումը չարունակեց: Ֆրանսացին երրորդ սէթին ետք մրցումը չկրցաւ շարունակել (վիրաւոր), մինչ արդիւնքը կ'ընթանար Նալպանտեանի՝ 3-6, 6-3 եւ 6-1:

Զուիցերիսիալ Մարի - Գայիանէ Միքայելեան ենթարկուեցաւ Կոլմարի ճակատագրին եւ մրցումը շրդ սէթին կիսատ ձգեց, մինչ

արդիւնքը կ'ընթանար Բ. հանգրուանի իր ի նպաստ վոլիցերիացի Էմանուէլ Քայիարիի՝ 6-1 եւ 2-0:

Տղոց մրցումներուն, թիւ 1 դասուած Կոլմարի ճակատագրին եւ մրցումը շրդ սէթին կիսատ ձգեց, մինչ

Բ. հանգրուանի իր տոմսը, երբ շուէտացի Մակնուս Նորմանի դէմ իր կատարած մրցումը արտուեց Տրդ սէթին միայն: Մրցումը տեւեց 3 ժամ եւ 13 վայրկեան. անիկա վերջ գտաւ 6-3, 3-6, 6-

1, 6-7 եւ 6-2 արդիւնքով:

Ա. հանգրուանի մրցումներուն յիշատակելի անակնկալներ չարձանագրուեցան, բացի 15րդ դասուած սպանացի Ալեքս Բորթիսալի կրած պարտութենէն, որ իր ապակիցներէն Ֆելիչիանո Լոփէպէն պարտուեցաւ 6-7, 7-6, 7-6 եւ 6-3 արդիւնքով:


Պրապիլցի Կոստա Բուէրթէն՝ դասուած 30րդ, իր կարգին ապահովեց Բ. հանգրուանին իր տոմսը 6-4, 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնել է ետք մարտի չիլիացի Վրայիլի:

Արապիի ապակից եւ 18րդ դասուած Եունէս Ալիստի քիչ մը բախտով անցաւ Բ. հանգրուան, որովհետեւ արապի երկու սէթերուն յաղթական ձաթիւն Կիմէլիսոպ (Մ. Ն.) վիրաւորուելով չկրցաւ մրցումը շարունակել: մրցումը վերջ գտաւ 2-6, 4-6, 6-4 եւ 1-0 արդիւնքով:

Աղջկանց մրցումներուն, թիւ 1 դասուած Սերենա Ուիլիզու (Մ. Ն.), թէեւ առաջին սէթին պարտուեցաւ, սակայն յաջողեցաւ ապահովել Բ. հանգրուանը:



Մարի - Գայիանէ Միքայելեան



Լէյթըն Զուիթ

նին իր տոմսը, պարտութեան մատնելով ֆրանսացի իր մրցակիցը՝ Էմիլի Լուան 3-6, 7-6 եւ 7-5 արդիւնքով:

Երէկուան երկրորդ օրը բախտաւոր չէղաւ ֆրանսացիներուն համար, որովհետեւ ետք մարզիկներ (հինգ տղաք եւ երկու աղջիկներ) դուրս մնացին մրցաշարքին: Առաջին օրը դուրս մնացած էին երկու ֆրանսացի տղաք եւ ֆրանսացի աղջիկ մը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

ՕԼԻՄՓԻՔ - ԱՆՍԱՐ ՄՐՑՈՒՄԻՆ ԻՐԱՒԱՐԱՐԸ ԵՐԵՔ ԱՄԻՍՈՎ ԿԱԽԱԿԱՅՈՒԵՑԱԻ

Լիրանանի ֆուտբոլի ֆետերասիոնը, շաբաթակիցքին իր գումարած հերթական ժողովին վաւերացնել է ետք Ա. դասակարգի ախոյեանութեան 11րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, տուաւ հետեւեալ որոշումները:

● Սաժէս մէկ միլիոն լիրանանեան ոսկի տուգանքի ենթարկուեցաւ, որովհետեւ անոր համար կիրենքը անցեալ շաբաթավերջին թատաժին Սուրի դէմ տեղի ունեցած մրցումին ոչ մարզական կեցուածք ունեցան:

● Ֆետերասիոնը քննել է ետք անցեալ 8 Դեկտեմբեր 2002ին տեղի ունեցած Օլիմպիք - Անսար մրցումին օրուան իրաւարարին՝ Մոհամէտ Մանսուրի կատարած սխալները, որոնց իրաւարարը երեք ամիսով կախկալել 8 Դեկտեմբեր 2002ին սկսեալ մինչեւ՝ 7 Մարտ 2003:

● Սաժէսի մարզիկներէն Եունէֆ ժառհարի, որ անցեալ շաբաթ թատաժին Սուրի դէմ տեղի ունեցած մրցումին ստացաւ երկու դեղին քարտ, մէկ մրցումով կախկալուեցաւ:

● Բ. դասակարգի խումբերուն մաս կազմող չորս մարզիկներ, իրենց երրորդ դեղին քարտը ստանալուն պատճառով, այս շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներուն դաշտ չեն ներկայանար: Անոնց կարգին է Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ Վարդան Ղազարեան: Մէկական մրցումով կը կախկալուին նաեւ՝ Նասէր Համթո (հայալ Պրոթ Շիմալի), Նայէտ Մասրի (Ռիատա Ուալ Ատապ) եւ Ահմէտ Սալոմ (Ահլի Սայտա):

նենալիք մրցումներուն դաշտ չեն ներկայանար: Անոնց կարգին է Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ Վարդան Ղազարեան: Մէկական մրցումով կը կախկալուին նաեւ՝ Նասէր Համթո (հայալ Պրոթ Շիմալի), Նայէտ Մասրի (Ռիատա Ուալ Ատապ) եւ Ահմէտ Սալոմ (Ահլի Սայտա):

● Ռիատա Ուալ Ատապի մարզիկներէն՝ Ռամէզ Քրոտի եւ Օմար Մաքսուտ մէկական ամիսով կը կախկալուին իրենց կոշտ խաղարկութեան համար: Այս վերջինին պատիժը կը կրկնապատկուի, որով-

Ստորեւ՝ շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը, որ կրած է փոփոխութիւն մը:

Ա. դասակարգ (10ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ)

ՇԱԲԱԹ. 18 ՅՈՒՆԻՍԿԱՆ

Ախա Ալէյ - Մապարրա	2:15ից	ԺԱՄ
Պրոթ - Անսար	4:45ից	ԴԱՇՏ
ԿԻՐԱԿԻ. 19 ՅՈՒՆԻՍԿԱՆ		
Սաժէս - Սալամ	2:15ից	Պ. Համուտ
Սաֆա - Շ. Սահել	2:15ից	Սաֆա
Ահու - Օլիմպիք	2:15ից	Պէլլոթ
Նըթմէ - Թ. Սուր	4:45ից	Մ. Աւան

Բ. դասակարգ (12ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ) Բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 2:15ին

ՈՒՐԱԿԱԹ. 17 ՅՈՒՆԻՍԿԱՆ

Իժիմանի - Բայան	ԺԱՄ
ՇԱԲԱԹ. 18 ՅՈՒՆԻՍԿԱՆ	
Ահլի Սայտա - Մաժուալ Ալլեհար	Սուր
Հ.Մ.Ը.Մ. - Ռիատա Ուալ Ատապ	Պ. Համուտ
ԿԻՐԱԿԻ. 19 ՅՈՒՆԻՍԿԱՆ	
Ռասիմի - Շապալ Քրիփոլի	Ժուցիէ
Նապաթիէ - Մահապպա	Նապաթիէ

ԼՈՆՏՈՆԻ ՄԷՉ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ...

Շարունակուած Ա. էջէց

տուութեան մը: Մինչ այդ, գինուորական գործողութիւնները կը շարունակուին: Իսրայէլեան ուժերը պաղեստինցի 15 ծայրայեղականներ ձերբակալեցին Այսրյորդանանի մէջ: Ապահովութեան աղբիւրներ հաղորդեցին, որ իսրայէլեան ուժերը քննդեցին նաեւ ձերբակալուածներէն մէկուն բնակարանը, Թուլքարմի մէջ: Ըստ պաղեստինեան աղբիւրներու՝ Իստ Մասար անդամ էր «Աքսայի Նահատակներու Փաղանգներ»-ուն: Ձերբակալուածներուն կարգին է նաեւ Համասի ղեկավարներէն՝ Սալման Տարադէ, որ քանի մը անգամ փրկուած էր Իսրայէլի կողմէ կազմակերպուած մահափորձերէ: Պաղեստինեան իշխանութեան ներքին գործոց նախարար Հանի Հասան անընդունելի նկատեց որեւէ յայտարարութիւն, որ «հարեկուցութիւն» կը նկատէ

հարայէլի դէմ պաղեստինեան զինեալ պայքարը: Հասան, որ կը խօսէր արաբ ներքին գործոց նախարարներու ժողովին, դիտել տուաւ, որ պաղեստինցիներուն ընդդիմադրութեան իրաւունքը քննարկուածի առակալ չի կրնար դառնալ: Ան աւելցուց, որ արաբները պարտաւոր են քննարկելու Իսրայէլի գործադրած պետութեան ահաբեկչութեան դէմ պայքարելու միջոցները: Միւս կողմէ, Իսրայէլի ընդդիմադիր Աշխատաւորական կուսակցութեան ղեկավար Ամրամ Միցնա երէկ հաստատեց, թէ որեւէ պարագայի տակ մաս պիտի չկազմէ Արիէլ Շարոնի հետ կառավարական ընկերակցութեան մը: Միցնա չեղեց, որ Աշխատաւորական կուսակցութիւնը պիտի չզաւնակցի Շարոնի:

Հայաստանի ֆուտբոլի ապագային խումբերին մարզիչ արժանութիւնցի Օսքար Լոփէպէլ զարեցաւ իր պաշտօնէն, որովհետեւ Հայաստանի ֆուտբոլի ակումբը՝ «Փիւնիկ» երեւանը, որմէ ամսական կը ստանար տասը հազար ամերիկեան տոլար:

Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնը այժմ մեծ աշխատանք կը տանի նոր մարզիչ մը նշանակելու համար, որովհետեւ յառաջիկայ Մարտ 29ին տեղի կ'ունենայ Հայաստան-Հիւսիսային Իրլանտա մրցումը (Եւրո-2004ի վտում): Ներկայիս թեկնածուներուն կարգին է ֆրանսացի Հանրի Միշել:

(ԱՅՓ)

